## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2024 թվականի թիվ 26-Ա

## «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հունվարի 30-ի նիստում, քննարկելով «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

***<u>1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը</u>.***

Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի ««Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 535-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 535-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-04768/23 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Հանձնաժողովը 2024 թվականի հունվարի 16-ին ընդունել է «Թիվ ՀԳ-04768/23 վարույթով պատասխանող «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը բավարարելու և արագացված վարույթ կիրառելու մասին» թիվ 8-Ա որոշումը (այսուհետ նաև՝ **թիվ 8-Ա որոշում**):

***<u>2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՄՊՀ-011485 զեկուցագրով առաջարկել է Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Վարույթը հարուցվել է «պանիր ֆետա մարիաննա արֆետտո» անվանումով ապրանքը (այսուհետ նաև՝ **Ապրանք**) արտադրելու և իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***<u>3. Ընկերության դիրքորոշումը.</u>***

Ընկերությունը 2024 թվականի հունվարի 11-ին Հանձնաժողով ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Ապրանքի առնչությամբ դեռևս 2023 թվականի սեպտեմբեր ամսից Ընկերության կողմից միջոցներ են ձեռնարկվել նոր տարաներ ձեռքբերելու ու ապրանքատեսակի պիտակները փոփոխելու համար: Ընկերությունը նշել է նաև, որ այժմ Ապրանքի իրացում ու շրջանառություն չի իրականացնում:

Ընկերությունը 2024 թվականի հունվարի 11-ին ներկայացված միջնորդությամբ (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**) խնդրել է կիրառել արագացված վարույթ՝ հայտնելով, որ Ընկերությունն ընդունում է իր կողմից Ապրանքն արտադրելու և իրացնելու փաստը, դեռևս 2023 թվականի սեպտեմբեր ամսից միջոցներ է ձեռնարկել խնդրո առարկա ապրանքի նոր տարաներ ու նոր անվամբ պիտակներ ձեռքբերելու ուղղությամբ և այժմ այլևս հիշյալ անվանումով ապրանքի վաճառք չի իրականացնում: Բացի այդ, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել, որ տնտեսական մրցակցության ոլորտում բարեխիղճ վարքագիծ է դրսևորել:

Ի լրումն Միջնորդության՝ Ընկերությունը 2024 թվականի հունվարի 12-ին ներկայացված գրությամբ հայտնել է, որ ընդունում է իր կողմից Ապրանքն արտադրելու և իրացնելու փաստը, այսինքն՝ իրավախախտում կատարած լինելու հանգամանքը, այն է՝ արտադրատեսակի անվանման և համապատասխան այլ փաստաթղթերի մեջ «ֆետա» բառի օգտագործման ոչ իրավաչափ լինելը:

***<u>4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.</u>***

1. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 226-Ա հրամանի հիման վրա «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ ք. Երևան Մարգարյան 23/6 հասցեում գործող առևտրի օբյեկտում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին իրականացվել է դիտանցում, որի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 226 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 226 արձանագրություն**):

Թիվ 226 արձանագրության համաձայն՝ «Պար-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ ք. Երևան Մարգարյան 23/6 հասցեում գործող առևտրի օբյեկտում վաճառքում, ի թիվս այլնի, առկա է Ապրանքը: Մակնշվածքի համաձայն՝ Ապրանքն արտադրված է Ընկերության կողմից:

2. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 227-Ա հրամանի հիման վրա «Սիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Սիթի» ընկերություն**) պատկանող՝ ք. Երևան Մաշտոցի 5 հասցեում գործող առևտրի օբյեկտում 2023 թվականի դեկտեմբերի 7-ին իրականացվել է դիտանցում, որի արդյունքում 2023 թվականի

դեկտեմբերի 7-ին կազմվել է «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 227 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 227 արձանագրություն**):

Թիվ 227 արձանագրության համաձայն՝ «Սիթի» ընկերությանը պատկանող՝ ք. Երևան Մաշտոցի 5 հասցեում գործող առևտրի օբյեկտում վաճառքում, ի թիվս այլնի, առկա է Ապրանքը:

3. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 11249 գրությամբ (այսուհետ նաև՝ **Գրություն**) «Սիթի» ընկերությունից, ի թիվս այլնի, պահանջվել է ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

«Սիթի» ընկերությունը, ի պատասխան Գրության, 2023 թվականի դեկտեմբերի 19-ին, ի թիվս այլնի, ներկայացրել է թիվ Ա0919582544 հարկային հաշիվը, որի համաձայն՝ Ապրանքը մատակարարվել է Ընկերության կողմից:

4. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 11578 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 11578 գրություն**) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ Ապրանքի Հայաստանի Հանրապետությունում իրացման սկզբնաժամկետի վերաբերյալ՝ նշելով ամսաթիվը:

Ընկերությունը 2024 թվականի հունվարի 11-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Ապրանքն իրացվել է 2023 թվականի օգոստոսի 29-ից:

Ընկերությունը, ի լրումն թիվ 11578 գրության, 2024 թվականի հունվարի 24-ին հայտնել է, որ Հանձնաժողովին է տրամադրել թիվ Ա0919582544 հարկային հաշվի հիման վրա նույնականացված ապրանքի իրացման սկզբնաժամկետի վերաբերյալ տեղեկություն:

Հաշվի առնելով, որ ապրանքի իրացման սկզբնաժամկետի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու Հանձնաժողովի պահանջն ընկալվել է որպես թիվ 535-Ա որոշմամբ արձանագրված հարկային հաշվի հիման վրա նույնականացված (տարայի ձև, քաշ և այլն) իրացման վերաբերյալ տեղեկության տրամադրում՝ Ընկերությունը չի հայտնել, թե ընդհանրապես «Արֆետո» փափուկ պանիրը, որի մակնշման վրա առկա է եղել «Ֆետա» բառը, երբվանից է շրջանառության մեջ դրվել: Ըստ այդմ, Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող «Արֆետո» պանիրը, որի մակնշման վրա առկա է եղել «Ֆետա» բառը (անկախ տարայի ձևից, չափից և այլ հանգամանքներից) սկսել է արտադրվել և շրջանառվել 2019 թվականի հունվարի 10-ից:

Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ մինչև Վարույթի հարուցումը, արդեն իսկ դադարեցված է եղել տարբեր տարաներով ապրանքատեսակի վրա «Ֆետա» բառի օգտագործմամբ արտադրությունը:

5. Հանձնաժողովի նախագահին ժամանակավոր փոխարինողի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1098 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ-ին՝ խնդրելով տրամադրել Ընկերության կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների, ինչպես նաև նույն ժամանակահատվածում Ընկերության ընդհանուր հասույթի (ըստ ամիսների) վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2024 թվականի հունվարի 15-ին Հանձնաժողովին է տրամադրել հայցված տեղեկատվությունը, որի համաձայն՝ Ընկերության 2022 թվականի իրացման շրջանառությունը կազմել է ՀՀ դրամ, իսկ 2022 թվականին Ապրանքի իրացումից ստացված հասույթի չափը՝ ՀՀ դրամ:

***<u>5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. Վարույթը հարուցվել է Ապրանքն արտադրելու և իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

2. Ընկերությունն ընդունել է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը՝ հայտնելով, որ մինչև Վարույթի հարուցումը, արդեն իսկ դադարեցված է եղել տարբեր տարաներով ապրանքատեսակի վրա «Ֆետա» բառի օգտագործմամբ արտադրությունը և միջնորդել է կիրառել արագացված վարույթ:

3. Հանձնաժողովը թիվ 8-Ա որոշմամբ բավարարել է Միջնորդությունը և կիրառել է արագացված վարույթ:

4. Ընկերության կողմից Ապրանքն իրացվել է 2019 թվականի հունվարի 10-ից:

5. ՊԵԿ-ը 2024 թվականի հունվարի 15-ին Հանձնաժողովին է տրամադրել հայցված տեղեկատվությունը, որի համաձայն՝ Ընկերության 2022 թվականի իրացման շրջանառությունը կազմել է ՀՀ դրամ, իսկ 2022 թվականին Ապրանքի իրացումից ստացված հասույթի չափը՝ ՀՀ դրամ:

***<u>6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>***

***<u>1) Ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.</u>***

Վարույթը հարուցվել է Ապրանքն արտադրելու և իրացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, նախևառաջ, հարկ է համարում անդրադառնալ այն հարցադրման պարզաբանմանը, թե ինչպես է դրսևորվում անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունը անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.

2) ապրանքների որակն անհիմն չափազանցնելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Վերոնշյալից հետևում է, որ օրենսդիրը հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության օբյեկտիվ կողմի սպառիչ ցանկ չի սահմանել, այլ մասնավորեցրել է դրանցից մի քանիսը, որոնք արտահայտվում են.

1) ապրանքի բնութագրերի կամ իրացման պայմանների վերաբերյալ թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորության ստեղծմամբ, այդ թվում՝

ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելու եղանակով.

2) սպառողին գովազդվող կամ իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, այդ թվում՝ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ նշելու եղանակով.

3) տնտեսական մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող կամ սպառողների շահերը վնասող օրենքին հակասող գովազդով.

4) ցանկացած այլ դրսևորմամբ, որը ստեղծում է տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց բնութագրերի կամ այլ պայմանների վերաբերյալ մոլորեցնելու հնարավորություն:

Ընդ որում, միևնույն վարքագիծը միաժամանակ կարող է համապատասխանել հասարակության մոլորեցման մեկից ավելի դրսևորումներին: Այսպես, օրինակ՝ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կարող է ոչ միայն ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալ, այլ նաև ստեղծել թյուր տպավորության՝ ապակողմնորոշելու հնարավորություն:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից մտավոր գործունեության պահպանվող արդյունքի ապօրինի օգտագործմամբ (առանց դրա իրավատիրոջ թույլտվության) ապրանքի արտադրումը, վաճառքը, վաճառքի առաջարկը և այլ ձևով քաղաքացիական շրջանառության մեջ մտցնելը, եթե առկա չեն սույն օրենքի 17-րդ կամ 24-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների հատկանիշները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ են աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծագման տեղանուն է համարվում տարածքի (բնակավայրի), որոշակի տեղանքի կամ բացառիկ դեպքերում երկրի աշխարհագրական անվանումը, որը ծառայում է այն արտադրանքը նշելու համար, որը ծագել է տվյալ տարածքից, որոշակի տեղանքից կամ երկրից, և որի յուրահատուկ որակը կամ այլ բնորոշ հատկանիշները գլխավորապես կամ բացառապես պայմանավորված են տվյալ աշխարհագրական բնապայմաններով (ներառյալ՝ բնական և մարդկային գործոնները), և որի արտադրությունը, վերամշակումը և պատրաստումը տեղի են ունենում տվյալ աշխարհագրական վայրում:

Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև

2017 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրվել է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը **(այսուհետ նաև՝ Համաձայնագիր) և** Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքով վավերացվել է, **որը** ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 24-ին:

Համաձայնագրի 231-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ ավարտելով առարկության ընթացակարգը և ուսումնասիրելով Եվրոպական միության՝ X Հավելվածում նշված այն աշխարհագրական նշումները, որոնք գրանցվել են Եվրոպական միության կողմից՝ IX Հավելվածի A մասում նշված օրենսդրության համաձայն, Հայաստանի Հանրապետությունը պետք է պահպանի դրանք՝ սույն Համաձայնագրում սահմանված պահպանության մակարդակին համապատասխան:

Համաձայնագրի «Կողմերի օրենսդրությունը և աշխարհագրական նշման գրանցման, վերահսկողության և պահպանության տարրերը» IX Հավելվածի A մասի համաձայն՝ Եվրոպական միության օրենսդրությունը, ի թիվս այլնի, բաղկացած է «Գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի որակի համակարգերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1151/2012 (ԵՄ) կանոնակարգից (այսուհետ նաև՝ **Կանոնակարգ**)՝ իր կիրարկման կանոններով, իսկ աշխարհագրական նշումներին վերաբերելի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ ի թիվս այլնի, «Աշխարհագրական նշումների մասին» օրենքից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1179-1183-րդ հոդվածներից:

Համաձայնագրի «Պահպանվող աշխարհագրական նշումների ցանկ» հավելված X-ում 231-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված՝ Եվրոպական միության արտադրանքի աշխարհագրական նշումները ցանկում գինիներից, սպիրտային խմիչքներից և բուրավետացված գինիներից բացի գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի ցանկում տեղ է գտել նաև «Ֆետա» անվանումով պանիրը որպես պահպանվող ծագման տեղանուն:

Համաձայնագրի 233-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ X Հավելվածում նշված աշխարհագրական նշումները յուրաքանչյուր Կողմի կողմից պաշտպանվում են հետևյալից՝

a) պահպանվող անվանման՝ ցանկացած ուղղակի կամ ուղղակի առևտրային օգտագործումից՝ այնպիսի համեմատելի արտադրանքի համար, որը չի համապատասխանում պահպանվող անվանման ապրանքային հատկորոշումներին, կամ այնքանով, որքանով որ այդպիսի օգտագործումը վնասում է աշխարհագրական նշման համբավին,

b) ցանկացած չարաշահումից, նմանակումից կամ վերարտադրումից, նույնիսկ եթե արտադրանքի իրական ծագումը նշված է կամ եթե պահպանվող անվանումը թարգմանված է, սղագրված, տառադարձված կամ ուղեկցվում է այնպիսի արտահայտությամբ, ինչպիսին օրինակ՝ «ոճ», «տեսակ», «մեթոդ», «արտադրվում է», «նմանակում», «համ և հոտ», «նման» արտահայտությունն է, կամ նմանատիպ այլ արտահայտությամբ,

c) արտադրանքի ծագման վայրի, ծագման, բնույթի կամ էական հատկանիշների հետ կապված որևէ այլ կեղծ կամ մոլորության մեջ գցող նշումից, որը զետեղված է ներքին կամ

արտաքին փաթեթավորման վրա, տվյալ արտադրանքին վերաբերող գովազդային նյութերում կամ փաստաթղթերում կամ բեռնարկղի մեջ արտադրանքի փաթեթավորման վրա, ինչը կարող է սխալ տպավորություն ստեղծել դրա ծագման առումով, և

d) որևէ այլ գործողությունից, որը կարող է սպառողին մոլորության մեջ գցել արտադրանքի իրական ծագման առումով:

Համաձայնագրի 233-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահպանվող աշխարհագրական նշումները Կողմերի տարածքներում ընդհանրական չեն դառնում:

Համաձայնագրի 236-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ իր պետական մարմինների կողմից իրականացվող պատշաճ վարչարարության միջոցով ապահովում է Համաձայնագրի 233-ից 235-րդ հոդվածներին համապատասխան աշխարհագրական նշումների պահպանության հետ կապված պահանջների կատարումը: Յուրաքանչյուր Կողմ այդպիսի պահպանություն ապահովում է նաև շահագրգիռ անձի պահանջով:

Ընկերությունը Միջնորդությամբ ընդունել է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը՝ հայտնելով, որ մինչև Վարույթի հարուցումը, արդեն իսկ դադարեցված է եղել տարբեր տարաներով ապրանքատեսակի վրա «Ֆետա» բառի օգտագործմամբ արտադրությունը և խնդրել է կիրառել արագացված վարույթ:

Հանձնաժողովը թիվ 8-Ա որոշմամբ բավարարել է Միջնորդությունը՝ կիրառելով արագացված վարույթ:

Օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի՝ ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության կողմից Ապրանքն արտադրելը և իրացնելն այն դեպքում, երբ այն արտադրված չէ «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, պարունակում է անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

***<u>2) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին,

պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 88-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$S = Բ + Բ \times (Ծ - Մ)$$

Որտեղ՝

S-տուգանքի չափն է,

Բ-տուգանքի բազային գումարը,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, բացառությամբ ակցիաների:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է Բ = Հ x 2.5% x Ժ բանաձևով, որտեղ՝

Բ-ն տուգանքի բազային գումարն է,

Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է,

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանք է համարվում տվյալ իրավախախտման առնչությամբ Հանձնաժողովի կողմից հստակորոշված ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանում ներգրավված ապրանքը, իսկ ապրանքային շուկա հստակորոշված չլինելու դեպքում՝ ապրանքը, որն իրավախախտման հետևանքով ստացել է կամ կարող էր ստանալ իրացման համար առավելություն, իսկ դա որոշելու անհնարինության դեպքում՝ Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով նախատեսված դասակարգչի, ըստ հաջորդականության, ենթակարգում, ենթակարգում առանձնացված չլինելու դեպքում՝ կարգում, կարգում առանձնացված չլինելու դեպքում՝ դասում և դասում առանձնացված չլինելու դեպքում՝ խմբում ներառված ապրանքը:

Մեթոդաբանության 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածը Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին դադարեցված իրավախախտումների դեպքում՝ իրավախախտման դադարեցմանը նախորդող տարին է: Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունման պահին չդադարեցված իրավախախտումների դեպքում՝ Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարին է: Իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող տարում 12 ամբողջական ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրավախախտման դադարեցման կամ վարույթ հարուցելու մասին որոշման ընդունմանը նախորդող, բայց ոչ ավել քան 12 ամբողջական ամսվա գործունեության ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 22-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք ընդունվող հասույթի ընտրությունն իրականացվում է Մեթոդաբանության 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար ապրանքի իրացումից ստացված հասույթի փոխարեն հիմք է ընդունվում ընդհանուր հասույթը, եթե.

1) իրավախախտումը չի առնչվում որևէ ապրանքի հետ.

2) կիրառվող բազային գումարը հաշվարկվում է անձանց խմբում ընդգրկված այն տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, որը չունի ապրանքի իրացումից ստացված հասույթ.

3) պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա հնարավոր չէ գնահատել ապրանքի իրացումից ստացված հասույթը և տնտեսավարող սուբյեկտը չի ներկայացրել ապացույցներ ընդհանուր հասույթի, ապրանքի իրացումից ստացված հասույթի և դրանց գոյացման հիմքերի վերաբերյալ:

Մեթոդաբանության 17-րդ կետի համաձայն՝ եթե ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի վերաբերյալ պետական մարմնից ստացված տեղեկատվությունը ներառում է համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսներ և առանձնացված չեն համապատասխան ժամանակահատվածում ներառված ամիսներին ստացված հասույթները, ապա տուգանքի բազային գումարի հաշվարկման համար համապատասխան ժամանակահատվածը չընդգրկող ամիսների հասույթը նվազեցվում է: Նվազեցվող հասույթի գումարը յուրաքանչյուր ամսվա համար հավասար է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հասույթի գումարի և այդ ժամանակաշրջանում ներառված ամիսների հարաբերակցությանը:

*Իրավախախտման տևողությունը.*

Մեթոդաբանության 19-րդ կետի համաձայն՝ իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ժ = Ա/12$$

Որտեղ՝

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է.

Ա-ն դիտարկվող ժամանակահատվածն է:

Մեթոդաբանության 23-րդ կետի համաձայն՝ եթե դիտարկվող ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամբողջական ամիսը, ապա իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1, իսկ եթե դիտարկվող ժամանակահատվածը 60 ամբողջական ամսից ավելի է, իրավախախտման տևողության գործակիցը հաշվարկվում է 1.5:

Ընկերությունը Վարույթի շրջանակներում հայտնել է, որ Ընկերության կողմից արտադրվող «Արֆետո» պանիրը, որի մակնշման վրա առկա է եղել «Ֆետա» բառը

(անկախ տարայի ձևից, չափից և այլ հանգամանքներից) սկսել է արտադրվել և շրջանառվել 2019 թվականի հունվարի 10-ից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վարույթով որպես իրավախախտման սկզբնաժամկետ Հանձնաժողովը դիտարկում է Ընկերության կողմից Ապրանքն արտադրելու և շրջանառության մեջ դնելու ամսաթիվը՝ 2019 թվականի հունվարի 10-ը: Ընկերության կողմից իրավախախտման կատարման ժամանակահատվածը 12 ամսից ավելի է, հետևաբար սույն գործով իրավախախտման տևողության գործակիցը 1.5 է:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

Մեթոդաբանության 31-32-րդ կետերով և 39-40-րդ կետերով սահմանված են երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով Հանձնաժողովի կողմից որպես ծանրացնող և մեղմացնող որևէ հանգամանք չի հայտնաբերվել և չի հաստատվել:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը կազմում է 0%, իսկ մեղմացնող հանգամանքներինը՝ 0%:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա այլ հանգամանքներ առկա չեն:

***<u>Տուգանքի հաշվարկը</u>.***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

Մեթոդաբանության 47-րդ կետի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է Մեթոդաբանությամբ հաշվարկված տուգանքի 50 տոկոսը: Այսինքն, Ընկերության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 10-րդ կետի համաձայն՝ տուգանքի վերջնական գումարը կլորացվում է դեպի ներքև 1000 ՀՀ դրամի ճշգրտությամբ, հետևաբար, Ընկերության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է

ՀՀ դրամ:

***<u>3) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ</u>.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի թիվ 8-Ա որոշմամբ կիրառվել է արագացված վարույթ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերությանը հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***7. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 88-րդ հոդվածի 6-րդ մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «պանիր ֆետա մարիաննա արֆետտո» անվանումով ապրանքն արտադրելը և իրացնելն այն դեպքում, երբ այն արտադրված չէ «Ֆետա» ծագման տեղանվան մեջ ներառված աշխարհագրական տարածքում և պահանջներին համապատասխան, որակել որպես անբարեխիղճ մրցակցություն, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

2. Օրենքի խախտման համար «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 2 453 000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամի չափով տուգանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշման 2-րդ կետը դրանով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2024 թ. հունվարի 30
Երևան